



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
S 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ  
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԽՈՐԵՆ ՄԻՒԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ  
**ԱՇՈՏ ՍԱԼԵԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

## ՎՈԼՈՂՅԱ ՄԱՆԱՍՅԱՆ

Աշխարհագրական գիտությունների թեկնածու,  
ՀՊՏՀ

### ՌԱՅԻՆԱԼ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

*Հիմնաբառեր.* *նացիոնալ բնօգտագործում, բազմամյա խոտեր և խոտային էկոհամակարգեր, ագրոլանդաֆայտների կառավարում և հարմարվողական-լանջաֆայտին համակարգ, բուսաբուծության և անասնաբուծության էկոլոգիացում*

Հոդվածում քննարկվում է բազմամյա խոտերի և խոտային էկոհամակարգերի նշանակությունը տնտեսության ագրարային հատվածի հաշվեկշռված զարգացումն ապահովելու և նացիոնալ բնօգտագործման մեջ: Ընդգծվում են ագրոլանդաֆայտին համակարգերում հավասարակշռության պահպանությանը նպաստող ագրարային հատվածի էկոլոգիացման անհրաժեշտությունը, դրանց առավել արդյունավետ օգտագործման երկարակետությունը և գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը:

ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերը վտանգավոր վիճակում են: Ամենից հաճախ դրանք էրոզիայի հետևանքով են դուրս գալիս ցանքաշրջանառությունից: Հանրապետության գյուղատնտեսական հողատեսքերի  $\frac{2}{3}$ -ից ավելին վտանգավոր են էրոզիայի տեսակետից,  $\frac{1}{3}$ -ը ողողամաշված են: Էրոզիան ուղեկցվում է հողերի հումուսազերծման գործընթացով: Հումուսը հողային բերրիության կարևորագույն որակական ցուցանիշներից մեկն է, որի պաշարների կրճատումը գյուղատնտեսական մշակաբույսերի, պտուղների և խաղողի բերքատվության իջեցման, հողերի ուժասպառողության, վատթարացման և քայքայման հետևանք է: Բարձր արգավանդ հողերը հանրապետության տարածքի ընդամենը 26,3%-ն են, միջին արգավանդները՝ 13,2%-ը<sup>1</sup>: Ագրոլանդաֆայտների վատթարացման հետևանքով ՀՀ ագրարային հատվածն ամեն տարի կորցնում է մոտ 9,32 հազ. հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Էրոզիայի գործընթացների արագացման մեջ էական դեր է խաղում հողերը ծածկույթազրկող և ագրոէկոլոգիական հողապաշտպան ու հակաէրոզիոն հատկությունները նվազեցնող հեռաշարացան մանկուկտուրաների և մաքուր հարոսների վրա կողմնորոշ-

<sup>1</sup> Կ. Մելիքյան, Հ. Ղազարյան, Ռ. Մանուկյան, Գյուղատնտեսական նշանակության հողերի էկոլոգիական արդի վիճակը, հողօգտագործման մակարդակը, կառավարման համակարգերի կատարելագործումը և արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ գյուղնախարարության Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն, Եր., 2004, էջ 8, 14-16 և 17-20:

վող գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացումը: Այսպես՝ ՀՀ հացահատիկային, հատկապես՝ ամենարգավանդ Շիրակի գյուղատնտեսական գոտում (Ախուրյանի տարածաշրջան), 100 տարվա ընթացքում հողի արգավանդ հերկելի շերտի կեսն արդեն անպետքացած է: Լոռու մարզում արգավանդ սևահողերի շերտը, որտեղ ինտեսիվ կերպով մշակվում են եգիպտացորեն լրիվ հասունացման հատիկի համար, հացահատիկ և տեխնիկական մշակաբույսեր, վերջին 50 տարվա ընթացքում կրճատվել է 1.5 անգամ (1 մ-ից մինչև 0.5 մ) և շարունակվում է կրճատվել տարվա մեջ 0.3-1 սմ արագությամբ:

Հայաստանի լեռնային սևահողերում 100 տարվա ընթացքում, ընդհանրացված տվյալներով, վարելահողերի 0-30 սմ հերկելի շերտում հումուսի պաշարների նվազեցումը չոր տափաստանների լեռնաշագանակագույն հողերում կազմել է մինչև 90 տ/հա (տարվա մեջ՝ 0.7-0.9 տ/հա), խոնավ տափաստանների աղազերծված տեղ-տեղ պարարտ լեռնային սևահողերում՝ 50-70 տ (տարվա մեջ՝ 0.5-0.7 տ/հա): Հայաստանի լեռնային սևահողերը 100 տարվա ընթացքում կորցրել են հումուսի մինչև 30-45%-ը: Քանի որ բուսաբուծության մթերքների արտադրության 70-80%-ը և ավելին ապահովվում է հողերի բնական բերրիության հաշվին, ապա աճում են նաև գյուղատնտեսական մթերքների արտադրության ծախսերը:

Միջոցների և նյութական ռեսուրսների խիստ պակասի պայմաններում հայաստանյան գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացումն ընթանալու է իրեն հատուկ լանդշաֆտային հարմարվողականության, կայունության, ռեսուրսատնտեսող, միջավայր ստեղծող և բնապահպանական դերի արդյունավետության ապահովման վրա կողմնորոշվող ռացիոնալ բնօգտագործման ուղով և հիմնվելու է գիտական տեղեկատվության, ագրոկլիմայական ռեսուրսների, աշխարհագրական, կենսաբանական և էկոլոգիական գործոնների առավելագույն օգտագործման վրա:

Տնտեսության ագրարային հատվածի գիտատար և բարձրտեխնոլոգիական վերակառուցումն անհնար է առանց արժանավայել ֆինանսավորման: ԱՀԿ-ի հետ համաձայնեցված՝ Հայաստանի ագրարային հատվածի աջակցության մակարդակը («դեղին զամբյուղ») կազմում է ՀՆԱ-ի 0,6%-ը կամ 125,0 հազ. դոլար: ՌԴ-ում այդ մակարդակը՝ 9,0 մլրդ, ԱՄՆ-ում՝ 19.1 մլրդ, ԵՄ-ում՝ 98.8 մլրդ դոլար է: Բայց մեր ագրարային հատվածին սահմանափակում է ոչ այնքան ԱՀԿ-ն, որքան մեր բյուջեի սուղ հնարավորությունները: Ընդ որում, «դեղին զամբյուղը» զարգացած երկրներում ագրարային հատվածի ֆինանսավորման ոչ հիմնական կարգավորիչն է: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում աջակցության ընդհանուր ծավալից «դեղին զամբյուղին» բաժին է ընկնում միայն 4%-ը, իսկ «կանաչին»՝ 90%-ը:

«Կանաչ զամբյուղի» միջոցառումները, որոնք առևտրի, այսինքն՝ շուկայի վրա ազդեցություն չունեցող են կամ էլ նվազագույն ազդեցություն են ունենում, կարող են առանց սահմանափակումների կիրառվել: Այդ միջոցառումները: Այստեղ մտնում են նաև ռացիոնալ բնօգտագործման և ագրարային հատվածի կենսաբանականացման միջոցառումները:

Ապահովել գյուղատնտեսական արտադրության կայունություն, պաշտպանել այն երաշտից, էրոզիայի և հողմնահարության քայքայումից, հողերի բերրիությունը բարձրացնել կարող է միայն դրանց բնական պաշտպանական ծածկույթը՝ բազմամյա խոտերը և խոտածածկ էկոհամակարգերը: Գյուղատնտեսական հողատեսքերի և ագրոլանդշաֆտների արդյունավետությունն ու կայունությունը մեծապես կախված են առավել կայուն և ամենաեղանակային բազմամյա խոտերից: Ցանքատարածությունների և ցանքաշրջանառության կառուցվածքում դրանց անբավարար մասնաբաժինը գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ պաշտպանություն չի ապահովում երաշտի, էրոզիայի, հողմահարության և հումուսագերծման ազդեցությունից: Այսպիսով՝ մեր հանրապետության գյուղատնտեսական հողատեսքերի  $\frac{1}{3}$ -ը էրոզիայի, հողմահարման ազդեցությամբ ոչ միայն վատթարանում են, այլև վարելահողերն ամեն տարի հումուս են կորցնում:

Որպես կերարտադրության հիմնական օբյեկտ՝ ագրոլանդշաֆտների կառավարման մեջ բազմամյա խոտերը և խոտածածկ էկոհամակարգերն ավանդականորեն օգտագործվում են իբրև հողաձևավորման, հողաբարելավման և հողապաշտպանության առավել արդյունավետ գործոններ: Դրանք արտադրական, միջավայր ստեղծող և բնապահպանական կարևորագույն գործառույթներ են կատարում ագրոլանդշաֆտներում և նշանակալից չափով ազդեցություն են ունենում հանրապետության տարածքի էկոլոգիական վիճակի վրա, նպաստում նաև կենսոլորտում օրգանական նյութերի պահպանմանը և կուտակմանը: Կերարտադրությունից բացի, ագրարային հատվածի ուրիշ ոչ մի ենթաճյուղ չի հիմնվում բնական ուժերի և վերարտադրվող ռեսուրսների (արեգակի էներգիա, տարածքի ագրոլանդշաֆտներ, հողերի բերրիություն, խոտերի ֆոտոսինթեզ, խլամանրէների կողմից օդից կենսաբանական ազոտի ստեղծում) օգտագործման վրա: Հողերի վիճակի վատթարացումը կապված է ագրոլանդշաֆտների անհաշվեկշռվածության, դրանց կառուցվածքի ու գործառույթների խախտման, օրգանական և հանքային նյութերի ոչ լիարժեք փոխհատուցման և այլնի հետ:

Արժեքավոր գյուղատնտեսական հողատեսքերի և հողերի բերրիության պահպանությունը հնարավոր է միայն հիմնական հողաձևավորողների՝ բազմամյա խոտերի և մանրէների ակտիվ կենսագործունեություն ապահովող հողաձևավորման և հողային բիոտայի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման դեպքում: Բազմամյա խոտերի կարևոր հողաձևավորող դերը կապված է դրանց արմատային համակարգի առանձնահատկությունների հետ: Բազմամյա խոտերի արմատների զանգվածը գերազանցում է վերերկրյա զանգվածը, որի մի մասը կենսակարգով է: Բազմամյա խոտերի արմատների զանգվածի հարաբերակցությունը վերերկրյա զանգվածի նկատմամբ 30-50 անգամ ավելի մեծ է, քան միամյա բույսերինը: Բազմամյա բույսերի արմատային համակարգը թափանցիկ և կապակցող է դարձնում հողերի տարբեր հորիզոնները, հողերի մակերևույթը վնասակար ազդեցություններից պաշտպանող դիմացկուն ճիւղ է ձևավորում: Բազմամյա բույսերի արմատային համակարգով հագեցված հողերը՝ կենդանիների և մանրէների հսկայական բազմազանության բնակության եզակի միջավայր են, սնման և կենսագործնեության աղբյուր, որոնց ընդհանուր զանգվածը մինչև 3-7 տ/հա է կազմում:

Բույսերի արմատներով հագեցված 1գ բերրի հողում հաշվվում են միլիարդավոր մանրէներ: ՀՀ լավագույն հողերը՝ լեռնային սևահողերը, ձևավորվել են փետրախոտային տափաստանների բազմամյա բուսականության տակ: Բազմամյա խոտերը ստեղծում են և պահպանում հողերի կնձկային կամ հատիկավոր կառուցվածքը, որը համարվում է երկրագործության կարևոր խնդիրներից մեկը: Կնձկային կամ հատիկավոր կառուցվածքի դեպքում բարելավվում են հողերի ջրային և օդային ռեժիմները: Ջուրը հեշտությամբ թափանցում է և պահպանվում դրանցում, քան հոծ զանգվածում, որտեղ այն մազանոթներով բարձրանում է մակերես և գոլորշանում:

Բազմամյա խոտերն անհրաժեշտ են հողային կառուցվածքի վերականգնման համար, որն անխուսափելիորեն քայքայվում է բոլորովին նույնական միամյա մշակաբույսերի անընդհատ աճեցման, ագրոէկոհամակարգերի վրա տեխնիկայի և քիմիական միջոցների շատ ծանրաբեռնվածության դեպքում: Բազմամյա հատիկաբույսերի խառնացանքը, հատիկաընդեղենային բույսերի հետ միասին, կարևոր դեր է խաղում հողաձևավորման մեջ՝ անհրաժեշտ քանակությամբ բուսահող ու կալցիում մատակարարելով հողին և ապահովելով հզոր կառուցվածքային շերտի ստեղծումը: Բազմամյա հատիկային և հատիկաընդեղենային բույսերից խոտախառնացանքերի այդ հիանալի հատկությունը թույլ է տալիս կառավարել հողերի կառուցվածքը և բերրիությունը:

Եթե բազմամյա խոտերի արմատային համակարգը հողում ստեղծում է կենդանիների ու մանրէների՝ հողաձևավորողների բնակության, սնման աղբյուրների և կենսագործունեության հսկայական բազմազանության եզակի միջավայր, ապա միամյա մշակաբույսերի և մաքուր հարսների տակ՝ աղքատացած հողաձևավորման բիոտա: Դրան գումարվում են հողերի կառուցվածքը քայքայող և հողային բիոտան ուժասպառ անող մի շարք բացասական գործոններ, ամենից առաջ՝ ծանր տեխնիկայով հողերի բազմիցս մշակումը և մշակաբույսերի պաշտպանության միջոցների կիրառումը:

Ծանր տեխնիկայով 25-30 սմ հաստությամբ հողի շերտի բազմիցս մշակումը քայքայում է դրա կնձկային կառուցվածքը և պնդացնում է ենթահերկելի շերտը: Փոշեկերպ մասնիկների մասնաբաժինը չափավոր խոնավ տափաստանների լեռնային կարբոնատային և տիպիկ սևահողերի ծավալում աճում է մինչև 60-65%, բարակ են դառնում մազանոթները: Այդ պատճառով հողի հերկելի շերտը չորանում է, հիմքերով հագեցվածությունը, առավելապես կալցիումի կորստի հաշվին, նվազում է մինչև 80-85%: Ավելանում է հողերի ջրատարրալուծական թթվայնությունը (PH նվազում է մինչև 4.5-5):

Բազմամյա խոտերն՝ օրգանական նյութերի ընդլայնված վերարտադրությունը հողում ապահովող գյուղատնտեսական մշակաբույսերի միակ խումբն են: Դրանում է կայանում նրանց կարևոր առավելությունը՝ համեմատած միամյա մշակաբույսերի, հատկապես հեռաշարացանների հետ: Միջին հաշվով ՀՀ-ում հողերի բերրիությունը (հումուսի պարունակություն) աճում է բազմամյա խոտերի (տարվա մեջ 0.2-0.6 տ/հա) և նվազում միամյա մշակաբույսերի տակ (0.4-1 տ/հա):

Վ. Դոկուչանի և Վ. Վիլյամսի կողմից ձևակերպված տնտեսական գործունեության լանդշաֆտաէկոլոգիական սկզբունքը զարգացում է ստանում ագրոլանդշաֆտների և

հարմարվողական-լանդշաֆտային երկրագործության նախագծման ժամանակակից մեթոդաբանության մեջ<sup>1</sup>: Ագրոլանդշաֆտների կառավարումը և երկրագործության էկոլոգիացումը ենթադրում են, ագրոլանդշաֆտների հաշվեկշռված ենթակառուցվածքների, ցանքատարածությունների ու ցանքաշրջանառության կառուցվածքի ստեղծում, խոտացանության լայն արմատավորում (վարելահողերի մինչև 15%-ը) և կրկնակի ցանքատարածությունների ու կանաչ պարարտացման մշակաբույսերի զանգվածային յուրացում, դաշտերում խոզանաբույսերի մնացորդների պահպանում և օրգանական պարարտանյութերով սնուցում, հանքային պարարտանյութերի և թունաքիմիկատների նվազագույն չափերով օգտագործում:

Ագրոլանդշաֆտներով կառավարումը սերտորեն կապված է բուսաբուծության և անասնաբուծության ենթաճյուղերի հաշվեկշռված զարգացման հետ: Միայն խոշոր և մանր եղջերավոր անասունների առկայության դեպքում կարելի է ինչպես տնտեսական, այնպես էլ էկոլոգիական տեսանկյունից ցանքատարածությունների և ցանքաշրջանառության կառուցվածքում մշակաբույսերի լրակազմը դարձնել բարենպաստ, միաժամանակ, ապահովել հացահատիկային, հեռաշարացան մշակաբույսերի և բազմամյա խոտերի հերթագայության համակարգային արդյունք: Ընդ որում, բազմամյա խոտերի՝ գործածության մեջ մտցնելու հնարավորություններ են առաջանում, որոնք, բացի կերային նշանակությունից, չափազանց կարևոր են ագրոհամակեցությունների բուսասանիտարական վիճակի բարելավման համար: Բուսաբուծության և անասնաբուծության միասնացումը լուծում է գյուղատնտեսական մշակաբույսերի պարարտացման և հողերի կենսաբանական ակտիվության բարձրացման հիմնախնդիրը:

Սակայն, խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության ենթաճյուղերը մեզանում չափազանց դանդաղորեն են զարգանում: Արագ տեմպերով են զարգանում խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, այսինքն՝ անասնաբուծության այն ենթաճյուղերը, որոնք հատիկախարային կերարտադրության պահանջ ունեն: Համակցված կերը խոզերի և թռչունների օրաբաժնի հիմքն է: Խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, այծերի և ձիերի օրաբաժիններում կոշտ և հյութալի խոտերից ստացվող կերերի մասնաբաժինը գերազանցում է 70%-ը, իսկ համակցված կերերը՝ առնվազն 30%-ը:

1988 թվականից սկսած՝ զգալիորեն կրճատվել է կենդանիների և թռչունների գլխաքանակը, փոփոխվել է անասնաբուծական մթերքների արտադրության կառուցվածքը: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվել է 883.6 հազարից մինչև 701.5 հազար, խոզերինը՝ 344.1 հազարից մինչև 174.8 հազար, ոչխարներինն ու այծերինը՝ 1729.6 հազարից մինչև 778.1 հազար, թռչուններինը՝ 11394.9 հազարից մինչև 3942.8 հազար: Մսի արտադրության կառուցվածքում տավարի միսը 1988 թ. կազմել էր 39.8%, խոզի միսը՝ 20.5%, ոչխարի և այծի միսը՝ 11.7% և թռչնի միսը՝ 27.8%: 2015 թ. տավարի մսի արտադրությունը կազմել էր 63.3%, խոզի մսինը՝ 17.4%, ոչխարի ու այծի մսինը՝ 9.8% և թռչնի մսինը՝ 9.5%: Քննարկվող ժամանակահատվածում կովերի գլխաքանակի՝ 312.3

<sup>1</sup> Докучаев В., Доклад об оценке земель вообще и Закавказья, в особенности: почвенные, горизонтальные и вертикальные зоны. Соч.т.6, М.-Л, изд. АН СССР, 1951, с. 396-397.



հազարից մինչև 318.6 հազար ավելացման արդյունքում կաթի արտադրությունը 565.9 հազար տ-ից հասել է մինչև 728.6 հազարի<sup>1</sup>:

Բազմամյա բույսերից բազմամյա խոտերը և խոտածածկ էկոհամակարգերը ագրոլանդաֆտներում իրենց կարևոր միջավայր ստեղծող դերի հաշվառմամբ ցանքատարածությունների և ցանքաշրջանառության կառուցվածքում պետք է կարգով գրավեն ավելի մեծ տարածքներ: Կերային բազայի ընդարձակումը թույլ է տալիս խորացնել անասնաբուծության ներճյուղային մասնագիտացումը:

Սակայն, հանրապետությունում այլ իրավիճակ է ձևավորվում: Բուսաբուծության և անասնաբուծության գոտիական մասնագիտացման անհաշվեկշռվածությունը (միջճյուղային և ներճյուղային), ցածր մթերատվությունը և գյուղմթերքների արտադրության անկայունությունը, կենդանիների ու թռչունների գլխաքանակի կրճատումը, բազմամյա խոտերի ցանքատարածությունների կրճատում, անասնաբուծության համար՝ կերերի պակասորդ (էներգիա, սպիտակուցներ), գյուղատնտեսական հողատեսքերի (ագրոլանդաֆտների) վատթարացում է առաջացրել:

«Երկրագործության մեջ ձևավորվել է սննդարար նյութերի բացասական հաշվեկշիռ: Գյուղատնտեսական գործունեության հետևանքով դրանց ամենամյա դուրսբերումը հողից 3 անգամ գերազանցում է հանքային և օրգանական պարարտանյութերով դրանց վերադարձը: Ժամանակակից երկրագործության մեջ բերքի մեծ մասը ձևավորվում է վաղօրոք կուտակված սննդարար նյութերի և հողերի բերրիության ակտիվացման հաշվին:

Հացաբույսերի հետ համեմատած, որոնք ցանքատարածությունների և համախառն բերքի բարձր տեսակարար կշիռ ունեն, կերային մշակաբույսերի ցանքատարածությունները 2001-2015 թթ. ընթացքում ավելացել են 18,1%-ից մինչև 22,2%, տարվա մեջ միջին հաշվով՝ 1,39 հա: Բազմամյա խոտերի տակ զբաղեցված են 64967 հա կամ կերային մշակաբույսերի ցանքատարածությունների առնվազն 83,1%-ը: Դրանց մեջ գերակշռում է (50%-ից ավելի) ցածր բերքատվությամբ (13-15 գ/հա) հնամենի խոտածածկը: Ամբողջությամբ վերցրած կերային մշակաբույսերի կառուցվածքում ցածր են մնում կերերի պրոտեինային սննդարությունը և հողերի բերրիությունը որոշող հատիկաընդենեղային մշակաբույսերի մասնաբաժինը (առնվազն 30%-ը)<sup>2</sup>:

Հողերի բերրիությունը և ագրոէկոհամակարգերի արդյունավետությունը հողաձևավորման ուժասպառ լինելու պատճառով նվազում են զգալի տարածքների վրա, վատթարանում են բուսասանիտարական պայմանները: Համապատասխանաբար՝ ավելանում են գյուղմթերքների արտադրության ծախսերը: Վարելահողերի բերրիության վրա ազդող

<sup>1</sup> Народное хозяйство Армянской ССР в 1988 году. Стат. ежегодник, Ереван, Айастанм 1989, с. 201, 203, Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2011-2015 թթ., վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 113, 115:

<sup>2</sup> Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2016 թ., Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Եր., 2017, էջ 7:

գյուղատնտեսական հողատեսքերի և ագրոլանդշաֆտների կառավարման կարևոր գործոններ են՝ մշակաբույսերի տեսակային կազմը, ցանքատարածությունների կառուցվածքում՝ դրանց հարաբերակցությունը և բերքատվության մակարդակը: Բնական ազոտի պաշարների համալրման հիմնական աղբյուրը հողերում հատիկաընդեղենների ընտանիքի մշակաբույսերն են (բազմամյա և միամյա խոտեր, հատիկաընդեղեններ): Ցանքատարածությունների ռացիոնալ կառուցվածքում առավելագույն քանակությամբ պետք է լինեն բազմամյա խոտեր և հատիկաընդեղեններ (առնվազն 20-25%) և նվազագույնը՝ մաքուր հարոսներ և հեռաշարացան մշակաբույսեր: Վերջիններիս ցանքատարածությունները պետք է որոշվեն հումուսի վերարտադրության և հողից դուրս բերված սննդարար նյութերը վերադարձնելու ռեսուրսների առկայությամբ:

Տնտեսության ագրարային հատվածում արդյունավետ կառավարումը ապահովվում է ոչ միայն լավագույն սորտերով, որակյալ սերմերով, պարարտանյութերով և ագրոտեխնիկայով: Ագրարային հատվածի արդյունավետությունը և կայունությունը ագրոլանդշաֆտների, դրանց ենթակառուցվածքների (վարելահողերի, մարգագետինների և անտառների հարաբերակցություն), ցանքատարածությունների ու ցանքաշրջանառության կառուցվածքի, բազմամյա խոտերի մասնաբաժնի, էկոհամակարգերի վրա մարդածին ծանրաբեռնվածության ածանցյալներ են:

Էկոլոգիապես կայուն կառուցվածքի և նորմալ կերպով գործող ագրոլանդշաֆտների ստեղծումը թույլ է տալիս մեղմացնել երաշտի հետևանքները, կրճատել հողերի էրոզիան, բարձրացնել գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետությունը և բարելավել շրջակա միջավայրը: Ագրարային հատվածի էկոլոգիացումը ուղղված է լինելու ագրոլանդշաֆտային համակարգերում հավասարակշռության պահպանությանը: Բնօգտագործման պահանջների խստությամբ կատարումը, շրջակա միջավայրի պահպանությունը և ագրոլանդշաֆտների կառավարման բարելավումը դառնում են ագրոհամակարգերի արդյունավետության երկարակեցության և գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման խորացման հիմնական պայմաններ:

Տնտեսության ագրարային հատվածում, ի վնաս էկոլոգիականի և սոցիալականի տեղի է ունենում տնտեսական շահերի բավարարման ուղղությամբ վտանգավոր շեղում: Ագրարային տնտեսագիտության խնդիրը գյուղատնտեսական գործունեությունը բնության էկոլոգիական տարողունակության հետ համապատասխանեցնելն է: Հաշվեկշռված, կայուն ագրարային հատվածը և ռացիոնալ բնօգտագործումը դառնալու են պետական քաղաքականության գերակայությունը:

Ագրարային հատվածի զարգացման պետական ծրագրերում բավականաչափ ուշադրություն չեն դարձնում կերատադրությանը: Միաժամանակ, թույլ են զարգացած մարգագետնաբուծությունը, դաշտային կերարտադրությունը, կերային մշակաբույսերի ընտրասերումը ու սերմնաբուծությունը, կերերի անբավարար մթերումը, պահպանումը և օգտագործումը: Հաշվեկշռված հայրենական անասնաբուծության ներճյուղային մասնագիտացման խորացման վերականգնումը ուղեկցվելու է հանրապետության տարբեր մարզերում և տարածաշրջաններում կերարտադրության մեծածավալ զարգացմամբ:

**ВОЛОДЯ МАНАСЯН**  
**РАЦИОНАЛЬНОЕ ПРИРОДОПОЛЬЗОВАНИЕ КАК**  
**ВАЖНЕЙШЕЕ НАПРАВЛЕНИЕ АГРАРНОЙ ПОЛИТИКИ РА**

*Ключевые слова:* рациональное природопользование, многолетние травы и травяные экосистемы, управление агроландшафтами и адаптивно-ландшафтные системы, экологизация растениеводства и животноводства

*В статье очерчиваются место и значение многолетних трав и травяных экосистем в обеспечении сбалансированного социально-экономического развития аграрного сектора и рационального природопользования. Излагаются основные положения о необходимости экологизации аграрного сектора, способствующей поддержанию равновесия в агроландшафтных системах, их продуктивному использованию и эффективности углубления сельскохозяйственного производства.*

**VOLODYA MANASYAN**  
**RATIONAL NATURE MANAGEMENT**  
**AS AN IMPORTANT DIRECTION OF AGRARIAN POLICY IN RA**

*Key Words:* rational nature use, perennial grasses and grass ecosystems, manager of agrolandscapes, esologizatiom of animal husbandry and plant industry

*In this paper the location and meaning of perennial grass and grassy ecosystem in the provision of the balanced social-economic development of agrarian sector and rational nature management is contoured. The necessity of basic position of agrarian ecosector contributing to the equilibrium in agrolandscape system as well as production usage and effectiveness of deepening the specialization of agricultural product are mentioned here.*

**ՎԵՆԵՐԱ ՈՍԿԱՆՅԱՆ**

*Քիմիական գիտությունների թեկնածու,  
դոցենտ, ՀՊՏՀ*

**ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՕՋԱԽԻ ՖՐԱԿՏԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՍՔԵՅԼԻՆԳ  
ԷՆԵՐԳԻԱՆ ԵՎ ԲԱՐԻՋ-ԿՆՈՖԻ ՄՈՂԵԼԸ**

*Հիմնաբառեր.* երկրաշարժ, երկրաշարժի էներգիա, երկրաշարժի օջախի ֆրակտալ կառուցվածք, սքեյլինգ էներգիա, մոդիֆիկացված մոդել